ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 28.09. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 15-ը (տասնհինգ):

Նիստին մասնակցում էին՝

1. Ն. Ավետիսյան՝ ռեկտորի ԺՊ-ի ՊԿ
2. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
9. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
12. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
14. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
15. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրությամբ և ընդհանուր զորահավաքով պայմանավորված՝ անվտանգության միջոցառումներ ներառող համալսարանի բոլոր ստորաբաժիններին իջեցված շրջաբերականի քննարկում

2. ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրությամբ և ընդհանուր զորահավաքով պայմանավորված՝ <<Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի լուծարային քննաշրջանին (ինչպես նաև առարկայական տարբերություններին) չներկայացած ուսանողների մասին

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամի մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի 2-րդ կուրսի ուսանող Մանվել Խնձրցյանի մարզիչ՝ Կ. Ենգոյանի դիմումի քննարկման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրությամբ և ընդհանուր զորահավաքով պայմանավորված՝ անվտանգության միջոցառումներ ներառող համալսարանի բոլոր ստորաբաժիններին իջեցված շրջաբերականի քննարկում

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ռազմական դրությամբ և ընդհանուր զորահավաքով պայմանավորված՝ անվտանգության միջոցառումներ ներառող համալսարանի բոլոր ստորաբաժիններին իջեցված է շրջաբերական (կցված է արձանագրությանը) և հանձնարարեց դեկաններին այն ուղարկել նաև կուրսերի ավագներին, որպեսզի ուսանողները տեղյակ լինեն ZOOM հարթակից անվտանգ օգտվելու գործընթացին, քանի որ պատերազմական դրությամբ, պայմանավորված կիբեռ հանցագործությունները շատացել են՝ դառնալով ազգային անվտանգության խնդիր: Այնուհետև տիկին Ավետիսյանը ներկայացրեց այն միջոցառումները, որոնք խիստ անհրաժեշտ են իրականացնել բուհում: Դա առաջին հերթին ենթադրում է առաջնորդվել ուսումնական հաստատության աղետների ռիսկի կառավարման պլանով: Տիկին Ավետիսյանը տեղեկացրեց, որ խնդրել են այս հարցով զբաղվել պարոն Աթոյանին և պարոն Աղանյանին, ելնելով իրենց փորձառությունից և զբաղեցրած դիրքերից:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ռազմական դրությամբ պայմանավորված ըստ շրջաբերականի, պետք է բուհում սահմանել շուրջօրյա հերթապահություն, նախատեսվել է, որ բուհում այն կիրականացնեն արական սեռի ներկայացուցիչները,

պետք է կազմել հերթապահության գրաֆիկը և ներկայացնել վերադաս մարմնին՝ յուրաքանչյուր շաբաթ:

Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ ըստ շրջաբերականի, բոլոր աշխատակիցները պետք է շուրջօրյա հասանելի լինեն և ղեկավար կազմի համար գործում է աշխատանքային գրաֆիկ՝ մինչև 22:00 ժամը:

Տիկին Ավետիսյանը հանձնարարականներ տվեց ռեկտորատի անդամներին, տեղեկատվությունը հաղորդել նաև իրենց ենթակայության տակ գտնվող համապատասխան կառույցների աշխատակիցներին, իսկ պարոն Շահպարոնյանին խնդրեց իր հետ ռեկտորատից հետո քննարկել ներկայացված հարցերը, դրանք ճշգրիտ ու ժամանակին կազմակերպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրությամբ և ընդհանուր զորահավաքով պայմանավորված՝ <<Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի լուծարային քննաշրջանին (ինչպես նաև առարկայական տարբերություններին) չներկայացած ուսանողների մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի 1586-Ն որոշումը՝ ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրություն հայտարարելու մասին՝ <<Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամի ուսանողների չներկայանալը հիմնական և լուծարային քննաշրջանին (ինչպես նաև առարկայական տարբերություններին) ռազմական դրությամբ պայմանավորված գործողություններին մասնակցելու վերաբերյալ համապատասխան հիմքեր ներկայացնելու դեպքում համարել հարգելի, և վերոնշյալ գործընթացները կազմակերպել անհատական ժամանակացույցով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամի մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ բաժնի 2-րդ կուրսի ուսանող Մանվել Խնձրցյանի մարզիչ՝ Կ. Ենգոյանի դիմումի քննարկման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նկատի ունենալով «ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բաժնի առաջատար մարզիկ, Եվրոպայի փոխչեմպիոն Մանվել

Խնձրցյանի մարզիչ Կ. Ենգոյանի դիմումն ու դիմումին կցված փաստաթղթերում նշված մարզահավաքներին մասնակցելու համապատասխան փաստաթղթային հիմքերի առկայությունը՝ թույլատրել լուծարային շրջանն իրականացնելու անհատական ժամանակացույցով:

2. Մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանին հանձնարարել «ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բաժնի ուսանող Մանվել Խնձրցյանի լուծարային շրջանը կազմակերպել անհատական ժամանակացույցով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ հաջորդ օրը՝ ս.թ-ի սեպտեմբերի 29-ին ուսխորհրդի և ՊԴ համակազմի հետ համաձայնեցված արյան կայանում ժամը 10:00-ին արյուն հանձնելու համար կամավորները կարող են միանալ համալսարանի խմբին:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց նաև, որ երկրում ռազմական դրությամբ պայմանավորված առաջարկում է հետաձգել համալսարանի ուսանողական գիտաժողովը և հարցը դրեց քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝
ՀՀ ամբողջ տարածքում ռազմական դրությամբ պայմանավորված՝ <<Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամում սեպտեմբերի 29-ին նախատեսված ուսանողական գիտաժողովը հետաձգել, սակայն ներկայացված հոդվածների հետ կապված աշխատանքները կազմակերպել:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Շրջաբերական

Ինչ վերաբերում է ուսումնական գործընթացին, ապա անհրաժեշտ է.

1. Առաջիկա ուսումնական շաբաթվա առաջին դասերին հիմնվելով պաշտոնական տեղեկատվության վրա, սովորողներին պարզաբանել ստեղծված իրավիճակը՝ պետության պաշտպանության և սեփական հայրենիքի անվտանգության ապահովման գաղափարները ներկայացնելով, ինչպես նաև առաջնային անհրաժեշտություն է անցկացնել անվտանգության կանոնների ներկայացման դասեր՝ հատկապես ներկայացնելով կիբեռանվտանգության կանոնները: Կարող եք օգտվել հետևյալ ուղեցույցներից՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1677-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ հաստատված ձեռնարկներից՝ «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը. ուղեցույց երեխաների համար», «Երեխաների առցանց անվտանգության ապահովումը. ուղեցույց ծնողների համար», https://lib.armedu.am/resource/27385:

2. Մերտ համագործակցելով ծնողների հետ պետք է խստորեն վերահսկել երեխաների ներկայությունը սոցիալական ցանցերում, իսկ մուտքը TikTok ընդհանրապես արգելել՝ հաշվի առնելով այդ հարթակում անվերահսկելի բովանդակությունը և տեղեկատվական անվտանգության համընդհանուր կանոնները:

· Այն հաստատությունները, որոնք իրականացնում են հեռավար ուսուցում՝ պայմանավորված համաճարակային իրավիճակով կամ այլ հանգամանքներով, պետք է խստորեն հետևեն տվյալ հարթակի համար գործող անվտանգության կանոններին: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաստատություններից շատերն օգտագործում են ZOOM հարթակը, խնդրում ենք հետևել նշված ուղեցույցներին.

· Zoom հավելվածի միջոցով հեռավար դասընթաց կազմակերպելու ուղեցույց https://www.youtube.com/watch?v=BaftMwbSYrw

· Zoom.us գործիքը https://www.youtube.com/watch?v=syOHA-LzPsg&fbclid=IwAR3bro2s42XsuivQcy2kzBO3-xrcSDT_CA1DKBLvCBJz4WpAheoFOFRcUfk

· Zoom հարթակում գրանցումը, անձնական տվյալների լրացումը եւ տեղադրումը

https://www.youtube.com/watch?v=qvvHDfsib3w&fbclid=IwAR3377hPo2AskcE1fQXu7EZWdH7CI-9PLN0bgw3Y8IzwzDXQNj9Y57Uvx0c

Ինչպես ներբեռնել Zoom ծրագիրը եւ տեղադրել համակարգչում
https://www.youtube.com/watch?v=e1SWF0qh0cs&fbclid=IwAR0GbsSqw2io-I-z3y2FEiYReCsa0pw8A3bTv_yQGxsVAzQCYHPDIy1Yfcg

ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

Ռեկտորատի նախագահ՝ Ն. Ավետիսյան

Ռեկտորատի քարտուղար,
գիտական քարտուղար՝ Կ. Պետրոսյան

Պրոռեկտոր-աշխատակազմի
ղեկավարի ԺՊ՝ Գ. Նիկողոսյան

Ռեկտորի խորհրդական՝
Ֆինանսատնտեսական
վերլուծությունների,
ծրագրավորման և
հաշվապահական հաշվ. բաժնի
վարիչ-գլխավոր հաշվապահ՝ Ռ. Քալաջյան

Արհեստակցական
կազմակերպության նախագահ՝ Վ. Խաչատրյան

Գիտական քաղաքականության,
որակի ապահովման և
կառավարման կենտրոնի տնօրեն՝ Ա. Սարգսյան

Արտաքին համագործակցության
և հասարակայնության հետ
կապերի կենտրոնի տնօրեն՝ Հ. Մելքոնյան

Գրադարան-ուսումնագիտական
խորհրդատվությունների,
նորարարությունների և ՏՏ
կենտրոնի տնօրեն՝ Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան